

Ղուկաս 13:18,19 (Luke 13:18,19)

«Մանանեիսի հատին»

Վեր. Ստեփան Մնջերեան

Հայ Աւետարանական Գողգոթա Եկեղեցի 11.04.01

Այս առաւոտ կուգեմ խոսիլ թէ ինչպէս Տէրը կրնայ Իր գորութիւնը մէր մէջ յայտնել: Պիտի կ'արդանք Ղուկաս 13րդ գլուխ 18ը եւ 19երորդ համարները: Այս գլխուն մէջ պատմութիւն մը կայ որ այս է:

Յիսուս սինակօկի մէջ - Շաբաթ օր մը կը քարոզէր: Նկատեց կին մը որ 18 տարիէ ի վեր հիւանդ էր: Յիսուս Իր ձեռքը վրան դրաւ եւ ըսաւ անոր, *«Ո՛վ կին, դուն քու հիւանդութենէդ արձակուած ես»:* Եւ ան լման առողջացաւ:

Սինակօկի առաջնորդները բարկացան որ Շաբաթ օր ըրած էր այս հրաշքը, ըսելով թէ Յիսուս մեղանչէց: Սինակօկին իշխանը ըսաւ, *«Վեց օր կայ, որոնց մէջ կրնամ գործել. ուստի այն օրերը եկե՛ք բժշկուեցե՛ք, ո՛չ թէ Շաբաթ օրը»:*

Յիսուս պատասխանէց իրեն, *«Կեղծաւոր, ձեզմէ ամէն մէկը շաբաթ օրը իր եզրը կամ էջը մտուրէն չա՞րձակեր, որպէս զի տանի ջուր տայ: Հապա ասիկա որ Աբրահամի աղջիկ էր, որ ահա տասներորդ տարի Սատանան զանիկա կապած էր, չէ՞ր վայլեր որ շաբաթ օրը այն կապէն արձակուի»:*

Յիսուս ցուցուց Աստուծոյ գորութիւնը մեր կեանքին մէջ: Եւ Սինակօկի առաջնորդները յամառօրէն կը խորհէին թէ գիտեն Աստուծոյ գործը:

Յիսուս հիմայ կը բացատրէ Աստուծոյ թագաւորութիւնը որ տարբեր է անոնց համար որ կ'ընտրեն Իրեն վստահիլ: Եւ կուտայ օրինակ մը - Ղուկաս 13:18,19: *«Աստուծոյ թագաւորութիւնը ի՞նչ բանի կը նմանի, կամ ի՞նչ բանի նմանցնեմ անիկա: Մանանեիսի հատի նման է, որ մարդ մը առաւ իր պարտէզը ձգեց եւ անեցաւ ու մեծ ծառ մը եղաւ ու երկնի թռչունները անոր նիւղերուն վրայ բնակեցան»:*

Մանանելի հատը կրնայ փոքր ծառ մը դառնալ բայց հոս Աստուծոյ զօրութիւնով մեծ ծառ մը կրնայ դառնալ: Նոյն կերպով Աստուած Իր զօրութիւնով կրնայ մէր մէջ գործել:

Յանախ կ'անտեսենք Աստուծոյ գործը մեր կեանքին մէջ քանի որ մեր մտքերը սահմանափակ են եւ չենք տեսներ Աստուծոյ նպատակը:

Կը խորհինք թէ Քրիստոնիայ կեանքը եկեղեցական սովորութիւններ պահել է - նաեւ ունենալ մեծ եկեղեցի, շատ ժողովուրդ, սրահ, լաւ եկամուտ, եւ այս օրերս 1700ը տօնել - եւ այս ամենը կրնանք ընել համոզումով: Բայց տակաւին զգալ տկար մանանելի պէս - վախկոտ - անյոյս - անորոշ ապագային նկատմամբ:

Քարոզիչ Charles Spurgeon հիւղակ մը վարցեց եւ տեսաւ որ գետինը շատ աղտոտ էր. խնդրեց տիկինէ մը որ մաքրէ: Տիկինը մաքրեց ու մաքրեց եւ գետինը մնաց աղտոտ: Վերջապէս Spurgeon ինք չանաց մաքրել եւ ի՞նչ տեսնէ - գետինը հող էր:

Երբ մենք մեր չանգով կուգենք Քրիստոնիայ ըլլալ կը ձախողինք այս կը նմանի ցեխը մաքրել: Միայն Աստուած կրնայ մեզ մաքրել նաեւ Իր զօրութիւնով մեր մէջ ներգործել:

Յիսուսի օրինակը որ մանանելի հատը՝, մեզի համար է այսօր - մենք Աստուծոյ զօրութեանը պէտք ունինք որ անինք: Թոյլ տանք Աստուծոյ որ մեզ սնուցանէ եւ զօրացնէ:

Վերջին խորհուրդը - Պօղոս Առաքեալ կը գրէ - Փիլիպպեցիս 1:6
«Այս մասին վստահ ըլլալով՝ թէ ան որ ձեր մէջ բարի գործ մը սկսաւ, մինչեւ Յիսուս Քրիստոսին օրը պիտի կատարէ»:

Եթէ կը կասկածիս, տկար կըզգաս, եւ մինակ կըզգաս ուրեմն Աստուծոյ վստահէ քանի որ միայն ան է որ կրնայ օգնել քեզ - հիմա եւ մինչեւ Յիսուսի գալուստը: